

զեղբայր իւրեանց զպատրիարքն Անտիոքայ ՚ի բանտէն, եւ եթէ ընդդէմ ինչ դարձցի կոմսն, կաշկանդել եկեղեցական կապանօք, որովք արդէն կապեալ բանադրեալ էր զնա եւ զկուսակիցս նորա՝ հայրապետն բանտարկեալ: Իսկ Տրիպօլսեցոյն ՚ի բաց մերկացեալ այնուհետեւ զամենայն պատրուակ պատկառանաց, գրոյ եւ խղճի, յանդգնեցաւ ոչ միայն եւ եւս պնդել զպահ արգելանի նորա, այլ եւ՝ որպէս երբեմն առ ազատանալ ՚ի քաղաքական տեսչութենէ Պապին՝ զկայսրն ընտրեաց իւր գերիշխան, եւ զարդիս փոխանակ իւրակրօն լատին պատրիարքի՝ թոյլ ետ Յունաց կարգել յինքեանց պատրիարք Անտիոքայ¹⁶⁸. որ եւ ջանաց որսալ զոմանս յուխտէն Լատինաց, եւ զայլսն ընդ բանիւ արար. ընդդէմ որոյ, պատուիրեաց Պապն՝ նորով կոնդակաւ (4 մարտի, 1208) առ նոյն նուիրակ իւր, մերժեալ զապօրէն եկամուտն ՚ի գաւառէն, եւ զհաւանեալս նմին անդարձս՝ հանդերձ կոմսինն՝ բանադրել: Այսպէս երկոքին կողմանք մարմնաւոր եւ հոգեւոր զինուք ընդդէմ իրերաց մաքատէին. եւ ՚ի յերկարել հակառակութեանն՝ պատրիարքն Պետրոս առաքինօրէն վճարէր զկեանս իւր ՚ի բանտին, իշխեմ ասել թէ եւ վկայօրէն, ՚ի սկիզբն 1208 ամի¹⁶⁹, հաւատարիմ մնալով իրաւանց արդարութեան:– Ի հնչել համբաւոյն՝ ոչ կարէր Քահանայապետն չողբալ դառնապէս (՚ի կոնդակին որ յ'12 յուլիսի, 1208). «Ո՛վ ազնուականդ Անտիոք, քաղաք ամենավայելուչ, եւ զոգջիր ուրախութիւն ամենայն երկրի, քանի՛ չարաչար անշքացեալ երեւիս վասն այսքանոյ մեծի եղերանդ. քանի՛ անարգաբար շլացար այդու զծուծ գործով. ու՛մ նմանեցուցուք զքեզ. կամ ու՛մ կարասցուք հաւասարել զաղէտս թշուառութեան քո. ամենայն ազինք բողոք բառնան ամբաստանութեանց ՚ի միջի քում. զոր օրինակ ջրհոր ցրտացուցանէ զջուր իւր, այնպէս ցրտացուցեր զզինուորութիւն? քո»¹⁷⁰: Յետ այսպիսեաց եւ որ սոցին սակի բանից եւ մեղադրելոյ զկոմսն, պատուիրէ նուիրակին՝ երթալ կարգել օրինաւոր յաջորդ վախճանելոյն:

¹⁶⁸ Թուղթք Իննովկ. Ժ. Թ:

¹⁶⁹ Թուղթք Իննովկ. ԺԵ, ՃՁԱ:

¹⁷⁰ «O nobilis Antiochia, urbs perfecte decoris, et terræ quasi gaudium universæ, quam graviter esse cerneris per tam grave ignobilitata flagitium, quam turpiter per tam turpe facinus offuscata! Cui comparabimus te, vel cui tuam possumus miseriam adæquare? Omnis gentis enim calumnia in medio tui est. Que cisterna facit frigidam aquam suam, ita militiam tuam frigidam reddidisti».- Epist. Innoc. XI, CX.